ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/1378-22 առ "20" 06 2022թ.

«Սեյրան Բալասյան Արթուրի» ԱՁ
E-mail: seryan.balasyan@mail.ru

Ձեր №_____ առ "___" _____ 2022թ.

[Ծանուցում №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/22-01/048 պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի՛ պարոն Բալասյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար զոդման, եռակցման նյութերի և սարքավորումների (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով ս/թ փետրվարի 16-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/22» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 1,2,4,5, և 17-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Սեյրան Բալասյան Արթուրի» ԱՁ-ի միջև 2022թ. մարտի 30-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/22-01/048 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 492500 (չորս հարյուր իննսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 17-րդ չափաբաժնով սահմանված 1 հատ KEДP MultiCUT-400C մակնիշի պլազմային կտրող ապարատի պահեստամասը, որի ընդհանուր գինը կազմում է 400000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, «Սեյրան Բալասյան Արթուրի» ԱՁ-ի կողմից մատակարարվել է պայմանագրի պահանջների խախտմամբ:

Համաձայն Պայմանագրի՝

- 2.4.1 կետի «Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով»;
- 2.4.2 կետի «Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետի համաձայն»;
- 2.4.4 կետի «Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի

պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր»:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Սեյրան Բալասյան Արթուրի» ԱՁ-ի հետ 2022թ. մարտի 30-ին կնքած թիվ 01/048 պայմանագիրը 17-րդ չափաբաժնի մասով:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքի մասով կկիրառվեն պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժը և տուգանքը:

Գլխավոր տնօրենի տեղակալ-
ընդհանուր հարցերի գծով տնօրեն՝ **Ս.Մաթևոսյան**

Կազմեց՝ Վ. Մանուկյան
ԳԲ 2-րդ կարգի մասնագետ
+374 10 28 29 60